Green Iron. Վանաձոր

Վանաձորի մանրաթելերի գործարանի վերաիմաստավորման նախագիծ

GREEN IRON. ՎԵՐԱՓՈԽԵԼՈՎ ՎԱՆԱՁՈՐԻ ԱՊԱԳԱՆ

GREEN IRON

Green Iron -ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել է ԷկոՀաբ հիմնադրամի, ORG Permanent Modernity-ի, Ferropolis հիմնադրամի և TUMO-ի կողմից: Green Iron-ը միտված է Հայաստանի արդյունաբերական տարածքները վերաիմաստավորելուն, վերապլանավորելուն և տնտեսապես վերաինտեգրելուն: Ներկայումս Green Iron-ի աշխատանքներն ուղղված են Վանաձորի մանրաթելերի գործարանը նորարարությունը խթանող և ստեղծարար տնտեսությանն աջակցող յուրահատուկ տարածքի վերածելուն, ինչը նաև կնպաստի կլիմայական ադապտացման օրակարգի և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների շրջանակում նոր ոլորտների զարգացմանը:

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ

Մեր նպատակն է Վանաձորի լքված քիմիական գործարանն ու դրա շրջակայքը վերածել քաղաքային կանաչ կենտրոնի, որում համատեղված կլինեն նորարարությունը, ճկունությունն ու կայունությունը: Մենք ձգտում ենք Վանաձորը դարձնել արդյունաբերական անցյալի վերաիմաստավորման և տեխնոլոգիական գերազանցության կենտրոն, որտեղ մեծ հնարավորություններ կստեղծվեն ստեղծարարության ու ձեռներեցության զարգացման և քաղաքի բարգավաճման ու համայնքի կյանքի որակի բարձրացման համար:

GREEN IRON-Ը՝ ԹՎԵՐՈՎ

Ֆինանսական տվյալներ

- **Ներդրման կարիք** - 24 միլիոն ԱՄԴ
- **Զուտ եկամուտը** - 33%

Ազդեցության շրջանակը

- **1200 նոր աշխատատեղեր**
- **200,000 տարեկան այցելուներ**
- **37,000+ կմ2 վերակառուցված շինություններ**
- **$100+ միլիոն սոցիալական արժեք**

ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Մարզային քաղաքները վճռորոշ դեր են խաղացել Հայաստանի համաչափ զարգացման համար՝ հեռավոր գյուղական համայնքների համար ապահովելով զբաղվածության և տնտեսական գործունեության հնարավորություններ: Կառուցվածքային տեղաշարժերի, անարդյունավետ կառավարման և հստակ զարգացման տեսլականի բացակայության պատճառով այդ քաղաքները դարձել են ամենախոցելի համայնքները սոցիալ-տնտեսական տեսանկյունից և արդյունքում գրանցվել են գործազրկության, արտագաղթի և աղքատության բարձր ցուցանիշներ: Վանաձորն այդ համայնքներից մեկն է:

Վանաձորը 1980-ական թվականներին իր քիմիական և թեթև արդյունաբերությամբ, կրթական, առողջապահական և վերականգնողական ոլորտներով եղել է Հայաստանի առաջատար տնտեսական կենտրոններից մեկը շուջ 150,000 բնակչությամբ: Այժմ զանգվածային արտագաղթի և զարգացման հեռանկարների բացակայության պայմաններում քաղաքի բնակչությունը կրճատվել է գրեթե երկու անգամ:

Հայաստանի մարզային քաղաքների զարգացումը հանդիսանում է Կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից, քանի որ Երևանի տարածքից դուրս տեղակայված արդյունաբերական ենթակառուցվածքների էական մասը կենտրոնացած է մարզային քաղաքներում և հիմնականում ակտիվ չէ: Հաշվի առնելով ներկայիս տեխնոլոգիական առաջընթացը՝ գոյություն ունեցող արդյունաբերական ժառանգության արդյունավետ վերապրոֆիլավորումը պահանջում է նորարարական մոտեցումներ: Ամենատարածված լուծումներից-մեկը արդյունաբերական տարածքների նոր կիրառական նպատակներով վերապրոֆիլավորումը, վերահմաստավորումը և վերակենդանացումն է՝ պահպանելով նախկին արդյունաբերական տեսքը որպես մշակութային ժառանգություն:

Արդյունաբերական տարածքների վերակառուցումն ու վերակենդանացումը կարող է դառնալ Վանաձորի կայուն և երկարաժամկետ զարգացման ռազմավարության հիմնաքարերից մեկը՝ հիմք ընդունով այն հանգամանքը, որ նախկին արտադրական և արդյունաբերական գոտիները զբաղեցնում են քաղաքի տարածքի 15-20%-ը (~ 350 հա):

ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳԻՐ

GREEN IRON-ը արդյունաբերական տարածքների վերաիմաստավորման և վերագործարկման առաջին լայնամասշտաբ նախագիծն է Հայաստանում և տարածաշրջանում: Ծրագրի նպատակն է Վանաձորի քիմիական մանրաթելերի գործարանը վերածել նորարարական բազմաֆունկցիոնալ կենտրոնի, որի առկայությունը կհանգեցնի համայնքի բազմաշերտ, ներառական և կայուն զարգացման համար:

Պահպանելով խորհրդային արդյունաբերական բացառիկ ժառանգությունը՝ կենտրոնում կգործարկվեն բազմազան թեմատիկ ծրագրեր, որոնք կմիավորեն կրթությունը, նորարութունտը, մշակույթի և ժամանցը: Կենտրոնը կդառնա ստեղծարար (ստարտափներ, ֆիլմարտադրողներ, արվեստագետներ և այլն), մտածող (գիտնականներ, հետազոտողներ և այլք), փոփոխություններ բերող մարդկանք (հիմնադրամներ, ՀԿ-ներ, դոնորներ և այլն) և հնարավորություն ընձեռող մարդկանց (աքսելերատորներ, վենչուրային ֆոնդեր և այլն) եզակի համայնք:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի մասնաճյուղեր
Դասընթացների սրահներ
Լաբորատորիաներ
Փորձարարական կրթության ուսումնական կենտրոններ

ՄՇԱԿՈՒՅԹ

Համերգասրահներ
Ստեղծարար ազատ տարածքներ
Արվեստային աշխատարաններ
Ցուցասրահներ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Կանաչ տարածքներ
Կենսաբազմազանություն
Այգիներ և բացօթյա վերականգնողական գոտիներ
Շրջակա միջավայրի վերականգնում

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կանաչ արդյունաբերություն
Կանաչ քիմիա
Թեթև արդյունաբերություն

Մի քանի նմանատիպ աշխարահռչակ օրինակներ և մոտեցումները, ինչպիսիք են Landschaftspark Duisburg և Zeche Zollverein ծրագրերը Գերմանիայում, գաղափարական հիմք են հանդիսացել նախագծի համար:

Նախագծի ակնառու արժեքների թվում է գոյություն ունեցող նախագծերի հետ ներդաշնակ և սիներգիկ համագործակցության ներուժը: Համագործակցելով մի շարք ընթացիկ և ավարտված նախագծերի (VTC, TUMO, UNIVER և այլն), ինչպես նաև վանաձորյան տարաբնույթ մշակութային և կրթական համայնքների հետ՝ կենտրոնը կնպաստի Վանաձորի բրենդավորմանը՝ հանրաճանաչման և տեսանելիության խթանման միջոցով:

GREEN IRON ՆԱԽԱԳԾԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ՝

- Առանձնակի ուշադրություն քաղաքի կայուն զարգացման և ավելի կանաչ դարձնելու վրա,
- Արդյունաբերական ժառանգության վերափոխումը մշակութային արժեքի, ինչը կարող է դառնալ Վանաձորի այցեքարտը,
- Համապարփակ էկոհամակարգի նախագծում, որը կապահովի բնակիչների հետ համագործակցության և ռեսուրսների համատեղ օգտագործման հնարավորություններ,
- Տարածաշրջանի արժեքահեն զարգացում (համագործակցություն, փոխգործակցություն, վերաիմաստավորում, վերանայում, համատեղ ապրելու տարածքների հասանելիություն, կայունություն և այլն) և համախոհների համայնքի ստեղծում,
- Լայն հնարավորություններ Վանաձորի այլ արդյունաբերական տարածքների հետագա մեծամասշտաբ զարգացման համար,
- Հայաստանում և տարածաշրջանում միջոցառումների (օրինակ՝ գիտաժողովներ, փառատոներ, համերգներ և այլն) իրականացման խոշորագույն եզակի տարածք,
- Հայաստանը և Վանաձորը միջազգային արդյունաբերական տուրիզմի քարտեզի վրա ավելացնելու հնարավորություն,
- Հանրային-մասնավոր համագործակցության հնարավորություն, մասնավորապես՝ հանրային ներդրումների միջոցով տարածքը մասնավոր ներդրողների համար գրավիչ դարձնելով,
- Գրավիչ նախագիծ միջազգային կազմակերպությունների ֆինանսավորման համար, ինչպիսիք են ԵՄ-ն և Կանաչ կլիմայի հիմնադրամը և այլն:

Իր հայեցակարգով և մասշտաբով նախագիծը խոստումնալից է և կարող է օրինակելի նախադեպ դառնալ հարյուրավոր լքված արդյունաբերական տարածքների վերափոխման և վերապրոֆիլավորման համար՝ դրանք դարձնելով տնտեսական աճի կենտրոններ քաղաքային բնակավայրերում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԱԿԸ

Ստորև ներկայացնում ենք որոշ նախնական թվեր CIVITTA AM-ի իրականացրած տեխնիկատնտեսական հետազոտության արդյունքների հիման վրա: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ծրագրի զարգացման ընթացքում նոր գաղափարներ են ծնվում ու ներառվում նախագծում, ուստի կարիք կլինի վերանայել նշված թվերը:

$5

ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Համանման միջազգային ծրագրերը ցույց են տալիս, որ $1-ի ներդրումը ստեղծում է $5-ի սոցիալական արժեք:

1200

ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Green Iron-ն ընդհանուր առմամբ կստեղծի 1200 նոր աշխատատեղ (որից 50-ը նախագիծը կառավարող անձնակազմ և 1150-ը վարձակալներ):

200,000

ԱՅՑԵԼՈՒՆԵՐ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնվող զբոսաշրջությունը կբերի հյուրանոցների, ռեստորանների, զբոսաշրջային տեսարժան վայրերի և տրանսպորտային ընկերությունների հնարավորությունների:

$1M

ՄԻԼԻՈՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Տարեկան 200000+ այցելուները կծախսեն օրական USD30, իսկ գիշերակացի դեպքում՝ USD70:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ՝ USD1 = USD5

Միջազգային նմանօրինակ նախագծերի փորձը ցույց է տալիս, որ USD1 ներդրումն առաջացնում է USD5 սոցիալական արժեք ու ազդեցություն: Հետևաբար, նախագծում իրականացված ներդրումներն ունենալու են մուլտիպլիտակիվ էֆեկտ համայնքային ենթակառուցվածքների բարելավման, շինարարության և վարձակալության, զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտների զարգացման համար:

Նախնական գնահատումներով նախագիծը համայնքում կստեղծի ~1200 նոր աշխատատեղ, որից ~50 նոր աշխատատեղ նախագծի կառավարման աշխատանքների համար և ~1150 աշխատատեղ բազմաֆունկցիոնալ կենտրոնի վարձակալների կողմից: Կենտրոնի ռազմավարական տեղադիրքի (Երևան-Թբիլիսի կապուղի, Դիլիջան, Դեբեդի կիրճ և Ստեփանավան զարգացող զբոսաշրջային քլասթերների հետ մոտ ճանապարհային կապ և այլն) շնորհիվ կենտրոնը կգրավի տարեկան ավելի քանի 200,000 այցելուների ուշադրությունը:

Տարածքը հնարավորություն կունենա հյուրընկալելու ավելի քան 20,000 անձանց մասնակցությամբ մեծամասշտաբ միջոցառումներ յուրահատուկ միջավայրում: Տարածքի գոտիավորման և հատուկ նշանակության տարածքների ստեղծման շնորհիվ բազմազան կազմակերպությունների ներհոսք կլինի դեպի համայնք:

Գրասենյակներ և կոմերցիոն տարածքներ
14,000 m²

ժամանցի տարածքներ
5,000 m²

Նորարարական և մշակույթի հարթակներ
17,000 m²

Կրթական և գիտական հաստատություններ
9,000 m²

Ստեղծարար և արվեստի համար նախատեսված հարթակներ. Այս հարթակները հնարավորություն կստեղծեն միաձուլել հայկական ավանդույթները, քաղաքի արդյունաբերական անցյալը և ժամանակակից արվեստը: Կենտրոնը կդառնա համատեղ աշխատանքի, կրթության և ներշնչանքի յուրահատուկ վայր: Կստեղծվի մշակութային բազմաժանր կենտրոն (պատկերասրահներ, ցուցասրահներ, կինո, համերգասրահ, թատրոն)՝ արվեստը հանրության լայն շրջանակներին առավել հասանելի կդարձնելով:

Գրասենյակային և կոմերցիոն տարածքներ. Այս տարածքները հասանելի կլինեն տեղական և միջազգային կազմակերպությունների և ընկերությունների համար: Վերջիններս համար կստեծվեն մրցակցային հնարավորություններ՝ հաշվի առնելով տարածքների ժամանակակից ենթակառուցվածքները և ծախսերի օպտիմալացումը՝ տարածքների մատչելի վարձավճարների և մարդկային ռեսուրսների ծախսերի հետ կապված խնայողությունների շնորհիվ: Հատուկ խթաններ կտրամադրվեն ՀՀ-ում և արտերկրում գործող գիտական գործունեություն ծավալող կազմակերպություններին: Նոր բիզնես գաղափարներ գեներացնելու, սթարթափ ընկերություններ ստեղծելու և ներդրումային հոսքեր ապահովելու համար կստեղծվեն ինկուբատորներ, համատեղ աշխատանքի սրահներ (co-working) և կապերի հաստատման (networking) ազատ տարածքներ: Գործունեության առաջին 3 տարիների ընթացքում կբացվեն առնվազն 15 նոր գրասենյակներ: Ներկայումս ակտիվ բանակցություններ են վարվում ԹՈՒՄՈ-ի և Impact Hub-ի հետ՝ այստեղ մասնաճյուղեր բացելու ուղղությամբ:

Ժամանցի և հյուրընկալության տարածքներ. Այս տարածքները նախատեսված են ինտելեկտուալ և սպորտային ժամանցային խմբակների, հանրային սննդի կետերի և այլ նպատակների համար: Հասանելի կլինի ավելի քան 5 ժամանցի վայր, ներառյալ ժամանակակից մշակութային պատկերասրահներ, կինոթատրոն, փառատոների հարթակներ, չմուշկի և հեծանվի հրապարակներ: Ժամանցի այս կետերը կլրացնեն Վանաձորում և հարակից տարածքներում երիտասարդության զբաղվածության և ժամանցի պակասը, քաղաքն ավելի «ապրող» և գրավիչ կդարձնեն երիտասարդների համար:

Կրթական և գիտական հաստատություններ. Այս հաստատությունների ցանկում ընդգրկված են ճարտարապետական, ինժեներական, բարձր տեխնոլոգիաների և այլ փորձարարական լաբորատորիաներ: Վերջիններս ոչ միայն նոր շունչ կտան համայնքին և տեղում կպատրաստեն որակյալ մասնագետներ, այլև գիտական մտքի և նորարարությունների համալիր կենտրոն կդառնան Հայաստանի համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախագծի իրականացման համար պահանջվող նախնական ներդրումները կազմում են 24 միլիոն ԱՄՆ դոլար, որի մեջ ներառված չեն քիմիական մանրաթելերի գործարանի տարածքի երկարաժամկետ վարձակալման կամ գնման ծախսերը: Նշված գումարը ձևավորվել է իրականացվող ներդրումների մոտավոր հաշվարկից և կարող է էապես փոփոխվել գաղափարի հստակեցման և տարածքի/շինությունների վիճակի փորձագիտական գնահատականի արդյունքում: Նախագծի EBITDA մարժան առաջին տարիների ընթացքում 33% է՝ իրագործման ընթացքում հասնելով 43%-ի: Կանխատեսվող եկամուտները ստացվելու են հետևյալ աղբյուրներից՝ տարածքների վարձակալություն, հյուրանոցի և հյուրատան գործունեություն, զբոսաշրջային ծառայություններ և շրջայցեր գործարանի տարածքում: ԷկոՀաբ հիմնադրամի շուրջ կհիմնադրվի հատուկ նշանակության մեքենա՝ ծրագիրը ղեկավարելու և իրականացնելու համար:

Կարևոր է նաև հաշվի առնել տարածքը իր պոտենցիալով և կարողություններով ամբողջությամբ մատնված է անգործության, որը հանգեցնում է էական կորցրած օգուտի: Եթե Նախագիծը գործարկվեր 10 տարի առաջ, նախնական հաշվարկներով ներկայումս այն կձևավորեր առնվազն տարեկան 2 միլիոն դոլար համախառն եկամուտ և կհանդիսանար կարևոր հիմնասյունը Վանաձորի զարգացման համար:

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԹԻՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Նախագիծը գործարկվել է ԷկոՀաբ հիմնադրամի նախաձեռնությամբ և ընդլայնվել է՝ դառնալով ԷկոՀաբ հիմնադրամի, Ֆերրոպոլիս հիմնադրամի, OGR Permanent Modernity-ի, ԹՈՒՄՈ-ի և CIVITTA-ի համատեղ ծրագիրը: Green Iron-ը ֆինանսավորում է ստացել EU4Business ITTD-ից, ինչպես նաև Գերմանիայի Դաշնության արտաքին գրասենյակի Zivik ծրագրից:

ԷԿՈՀԱԲ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԷկոՀաբ հիմնադրամը խթանում է ակտիվ քաղաքացիությունը, ժողովրդավարական կառավարումը և կենսակայուն զարգացումը Հայաստանում՝ գյուղական համայնքների երիտասարդներին վերոնշյալ թեմաների շուրջ իրազեկելու ու՝նրանց համապատասխան կարողություններով օժտելու միջոցով: ԷկոՀաբը նաև իրականացնում է ներդրումային ծրագրեր, որոնք միտված են խթանելու կայուն զբոսաշրջությունը՝ բարելավելով գոյություն ունեցող ենթակառուցվածքները և ստեղծելով նորերը: ԷկոՀաբ հիմնադրամը հանդիսանում է «Բու այլ տուն» կրթական կենտրոնի սեփականատերը, որի նպատակը Լոռու մարզում կենսակայուն զարգացման և սոցիալական ձեռնարկատիրության առաջխաղացումն է:

ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ

Նախագծի բիզնես խորհրդատուն ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ ընկերությունն է, որն ունի պետական և մասնավոր հատվածներին խորհրդատվական ծառայություններ մատուցելու ավելի քան 15 տարվա փորձառություն: ՍԻՎԻՏՏԱ-ն ունի 30-ից ավելի գրասենյակներ աշխարհի 18 երկրներում: Ընկերությունը մշակել և իրականացրել է մի շարք մեծամասշտաբ և համալիր նախագծեր Հայաստանում և Արևելյալ Եվրոպայի երկրներում, որոնցից են ANEL ինժեներական լաբորատորիաների համալիրը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, CANDLE սինքրոտրոնային լուսային աղբյուրների գիտահետազոտական կենտրոնի տեխնիկատնտեսական հիմնավորման հետազոտությունը, Գագարին, Ենոքավան, Կալավան և Գյումրի համայնքների զարգացման ծրագրերը և այլն:

ՍՆԽ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԴԻԱ

Նախագծի ճարտարապետ-խորհրդատուն է ՍՆԽ ճարտարապետական ստուդիան: Թիմը մասնագիտացած է մրցութային և կոնցեպտուալ նախագծերի մշակման գործում: Ստուդիայի մեծագույն նվաճումներից է Մոսկվայի «Գարաժ» ժամանակակից արվեստի թանգարանի ամառային կինոթատրոնի նախագծումը: Իրականացված նախագծերի շարքում են ՀՀ խոշորագույն SS կազմակերպության 4500 քմ տարածքով գրասենյակը, «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի այցելուների կենտրոնը Վահագնի համայնքում և Դեբեդ գյուղի մանկապարտեզը:

ORG PERMANENT MODERNITY

ORG Permanent Modernity-ն հետազոտական, ռազմավարական և դիզայներական խումբ է, որը գրասենյակներ ունի Բրյուսելում, Անտվերպենում և Նյու Յորքում: ORG-ն մի հարկի տակ է հավաքել ճարտարապետների, ինժեներների, քաղաքաշինարարների, էկոլոգների, տնտեսագետների, ռազմավարություն մշակողների, քաղաքականություն մշակողների և ենթակառուցվածքների մասնագետների, որոնք միասին աշխատելով՝ քաղաքային, գյուղական կամ տարածաշրջանային բարդ խնդիրների լուծումներ են մշակում: Նրանք աննախադեպ գիտելիք ու փորձառություն ունեն հետարդյունաբերական և հետխորհրդային երկրների նախագծերի համատեքստերում: Թիմի անդամները գլխավոր հատակագծեր են կազմել կենտրոնացված պլանային տնտեսության ժառանգություն ունեցող քաղաքների ու տարածաշրջանների համար և իրականացրել են թաղամասերի, համայնքների, կրթական ու նորարարական միջավայրերի վերափոխման նախագծման աշխատանքները:

FERROPOLIS

Ֆերրոպոլիսը հիմնադրվել է 1990-ականներին՝ Բաուհաուս Դեսսաու հիմնադրամի մտահղացմամբ: Այն զարգացել և գործում է որպես Գերմանիայի ու Եվրոպայի ամենաառաջատար բացօթյա մշակութային կենտրոններից մեկը: Լիգնիտային (գորշ ածխի) շրջանի բաց եղանակով ածխահանման հինգ խոշոր էքսկավատորները ներկայանում են որպես արդյունաբերական ժառանգության առանցքային խորհրդանիշներ, որոնց պահպանումը ֆինանսավորվում է մշակութային նպատակով ակտիվ օգտագործման շնորհիվ: Այսօր Ֆերրոպոլիսը տարածաշրջանային վերափոխման շարժիչ ուժն է: Այդ նպատակով Ֆերրոպոլիսի շուրջ ձևավորվում և զարգանում են նոր նախագծեր, ինչպիսիք են «Energieavantgarde Anhalt e.V.»-ը (տարածաշրջանում արժեքների ձևավորում էներգիայի վերականգնվող աղբյուրների անցման միջոցով), «Forum Rathenau e.V.»-ը (ապագայի՝ ածխածնի շրջանաձև օգտագործման տնտեսություն) և Սաքսոնիա-Անհալտի «NIK» արդյունաբերամշակութային ցանցը:

ԹՈՒՄՈ

ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը կրթական ծրագիր է, որը պատանիներին անվճար, արտադասարանային կրթություն է տրամադրում նորարարական տեխնոլոգիաների և դիզայնի բազմազան ոլորտներում: Ծրագրի առանցքում գերանհատականացումն է. այն թույլ է տալիս ուսանողներին ընտրել և առաջխաղացում ունենալ իրենց իսկ նախընտրած ուսումնական ոլորտներում: Մի կողմից ոլորտի մասնագետների տրամադրած պահանջարկված գիտելիքը, մյուս կողմից ուսանողների կողմից իրենց կրթության նկատմամբ պատասխանատվությունն իրենց ձեռքը վերցնելը ԹՈՒՄՈՆ դարձրել են միջազգային ծրագիր, որը կենտրոններ ունի Ֆրանսիայում, Ալբանիայում, Ուկրաինայում, Գերմանիայում, Պորտուգալիայում և Լիբանանում: Թումո ծրագիրը Հայաստանի 35 բնակավայրերի ավելի քան 23 000 ուսանողներին ամեն շաբաթ տրամադրում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական փորձառության հնարավորություն ուսուցման 14 ուղղություններով: Այս արտադասարանական անվճար ծրագիրը հասանելի է 12-ից 18 տարեկան բոլոր ուսանողների համար:

ԱՋԱԿԻՑՆԵՐ, ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Green Iron-ին աջակցում էն GIZ-ը, Գերմանիայի Դաշնության արտգործնախարարության Zivik ծրագիրը, Գերմանիայի Robert Bosch հիմնադրամը: Մենք այժմ նույնպես ձևավորում ենք նվիրված գործընկերների, աջակիցների, խորհրդատուների և փորձագետների ցանց:

Մեր առաջամարտիկներն են՝

- Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (UATE),
- ԹՈՒՄՈ-ն,
- Impact Hub Yerevan-ը,
- GIZ-ն ու ԵՄ-ն,
- Հայաստանում Եվրամիության պատվիրակությունը
- URVAKAN-ը,
- Ferropolis-ը,
- ORG Permanent Modernity-ն

Հուսով ենք, որ նախագծի վերաբերյալ մոտ ապագայում կկազմակերպվեն արդյունավետ քննարկումներ:

Սիրով՝ ԷկոՀաբ հիմնադրամ և գործընկերներ

Վանաձորի մանրաթելերի գործարանի վերահմաստավորման նախագծի իրագործելիության ուսումնասիրությունն ու վիզուալացումն իրականացրել են CIVITTA AM-ն ու SNKH ճարտարապետական ստուդիան